

## ՔԱՐԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Քարերի պաշտաման վերաբերեալ շատ քիչ բան կայ Գեղարքունիքում, մանաւանդ որ հսկայական քարաժայռեր, մեծ քարեր քիչ են պատահում։—Ղուլալի գիւղի արևելեան կողմում դրսնում է մի քարաժայռ, որի մէջ կայ մի փոքրիկ անցք։ Շատ յաճախ գալիս են այս ժայռի առջև մոմ վառում, աղօթում։ հազոց երեխաներին էլ բերում վերոյիշեալ անցքից անց են կացնում, իսկ եթէ փոքր ինչ մեծ լինելով չեն մտնում, նրանց շորերն են անցկացնում, որպէս զի հազից բժշկուին։ Այս պատճառով և այս անցքը կոչւում է խաղախաչ, հազի-խաչ, թէև վերան *սչ* մի խաչ չկայ։ Ժողովուրդը խաչ բառը շատ անգամ ուխտատեղու, սրբութեան, սրբի իմաստով էլ է դործածում, ինչպէս և այստեղ։

Սաղախաչից հարաւ, մօտ կէս կիլոմետր հեռու ևս կայ մի մեծ քար, որ քարաժայռից պոկուել, ընկել է ձորակի մէջ։ Սա կոչւում է Տիկնաքար և ձորը՝ սրա անուամբ՝ Տիկնաձոր։ Սրա վրայ վերջին ժամանակներս բարեպաշտ մարդիկ մի երկու խաչ են կերտել, որովհետև երկար ժամանակից ի վեր նա պաշտւում է։ Ո՛չ մի աւանդութիւն չկայ սրա մասին։

Նոր-Բայազէտի մօտի ս. Յովհաննէս ուխտատեղում ևս մի մեծ քար կայ ընկած, որի մէջ բազմաթիւ մեխեր են ցցուած։ Մոմի բոցից մրոտուած կողերը ցոյց են տալիս, որ սա ևս մի ժամանակ պաշտաման առարկայ է եղել, իսկ վերան խփուած բազմաթիւ մեխերը վկայում են, որ շատ շատերը փորձել են իմանալ, թէ իրենց ուխտը կատարուելով է թէ ոչ, որովհետև խփուած մեխը եթէ առանց ծռուելու մտել է քարի մէջ, այս նշան է համարուել, որ ուխտը, մտադրութիւնը կատարուելու է, իսկ եթէ ծռուել է և չի մտել, ասել է որ չի կատարուելու։

Ալիդըռըխ գիւղում «Ջօրաւոր խաչ» և Օրտակլուի «Թուխ-Մանուկ» կոչուած քարաժայռերը կտէխի և Փալլիսի պաշտաման մնացորդներ են <sup>1)</sup>։

Գիւղալուարա գիւղի ձորում կայ կոնաձև մի մեծ քար, որ պաշտւում է։ Գիւղացիները պատմում են, թէ այդ մի ժամանակ քակորի ամբոց է եղել, որ պատկանել է մի շատ հարուստ մարդու Մի օր մի աղքատ եկել է այդ տեղից մի երկու կտոր քակոր տանելու, բայց ազա՛հ հարուստը չի թողել։ Այն ժամանակ աղքատն անիծել է և բոլոր քակորը դարձել է քար։

<sup>1)</sup> Տես. Ֆալլիս գլուխը.